

# «ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ» ՅԱՅՏՆՈՒՄ Է ՊՐՆ. ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԸ

Հայաստանի Գերագույն Խորհրդի նախագահը ֆրանսիական «Լը Մոնտ» օրաթերթին յայտնել է, թէ ճիւղթենական նոր պայմանագիրը ստորագրել ցանկացող հանրապետութիւնների Յուլիսի 2ի հանդիպմանը իր ներկայութիւնը չի նշանակում, որ հայ ժողովուրդը հրաժարում է իր անկախութեան պահանջից: Նա ընդգծել է Կոնստանդնուպոլիսի Դարաբաղի հարցերով Ադրբեջանի հետ բանակցութիւնների նոր փուլի կարելորութիւնը:

Հարց.-Ըստ որոշ տեղեկութիւնների, Երեւանի, Յուլիսի 23ին Նոփ-Օգարյովոյում Ձեր ներկայութիւնը պրն. Գորբաչովը մեկնաբանել է որպէս նախաձեռնում, թէ Հայաստանը պատրաստում է ստորագրել միութենական պայմանագիրը: Հարցի էութիւնը ինչ՞ումն է կայանում:

Պատ.-Ոչինչ: Հայաստանը, որը խորհրդային Սահմանադրութեամբ ճշտում ուղին է ընտրել իր անկախութեանը հասնելու համար, սկզբունքօրէն պէտք է մասնակցի բոլոր այն հանդիպումներին, որտեղ բնագործում է Միութեան ճակատագրի հարցը:

Առաջին հանդիպմանը, Ապրիլի 2-3ին, վեց հանրապետութիւնները, որոնք մերժել էին խորհրդային Միութեան ամբողջութիւնը պահելու հանրաժողովն մասնակցել, չէին հրաւիրուել: Երկրորդ հանդիպմանը՝ Մայիսի 24ին Ֆրանսիայում էի գտնուում:

Երրորդից բացակայում էի՝ բողոքելու համար Լեոնային Դարաբաղի նկատմամբ Մոսկուայի որդեգրած ֆաղափականութեան դէմ: Այս մէկ հանդիպմանը մասնակցում եմ որպէս դիտորդ:

Երբ ինձ հարցրեցին, թէ ո՞րն է Հայաստանի կեցուածքը միութենական պայմանագրի նկատմամբ, յայտնեցի, թէ այդ հարցի պատասխանը չի կարելի տալ Սեպտեմբերի 21ին կայանալիք հանրաժողովից առաջ: Ուկրաինայի ներկայացուցիչները եւս նմանօրինակ պատասխան տուեցին: Նրանք պէտք է սպասեն երկու ամիս, մինչեւ հարցը դրուի իրենց խորհրդարանի բնագործմանը:

Հայաստանի պարագային կարծում եմ, որ պատասխանը այնքան էլ դժուար չէ՝ ժողովուրդը անկախութիւն է պահանջում, նոյնիսկ եթէ ցանկանում է Միութեան միւս հանրապետութիւնների հետ իր տնտեսական յարաբերութիւնները զարգացնել: Եւ ընդգծեցի, որ Մոսկուայի ուզած ձեւով հանրապետութիւններին ոչ ձեռնտու առեւտրական փոխանակման պայմաններ պարտադրելը, յատկապէս նրանց, որոնք օրէնքի հիման վրայ անկախութեան գործընթաց են ձեռնարկել, այդ կը լինի նոյն խորհրդային օրէնքների բռնաբարում: Այս տեսակէտը պաշտպանեց պրն. Ելցինը:

Հարց.-Գոյութիւն ունի այն տպաւորութիւնը, թէ հայերի մէջ հետզհետէ աճում է Միութեան մէջ մնալու տրամադրութիւնը:

Պատ.-Այդ մի շարք կուսակցութիւնների վերաբերմունքն է, ինչպէս համայնավար կուսակցութիւնը, Դաշնակցութիւնը՝ սփիւռեան հին կուսակցութիւն, որը պաշտօնա-

կանացուեց Հայաստանում. եւ դարաբաղցի, բայց Հայաստանում հաստատուած դարաբաղցիների որոշ խմբակցութիւնների: Նրանք բացայայտօրէն ասում են, թէ Հայաստանը պէտք է ստորագրի միութենական պայմանագիրը, վերամիաւորելու համար Լեոնային Դարաբաղը: Սակայն այս շրջանի բնակիչները Մայիսի 16ին որոշեցին խաղալ փոխգիշման ֆարտը եւ բանակցութիւններ ձեռնարկել Ադրբեջանի հետ:

Առաջին պատուիրակութիւնը, որը գլխաւորում էր գործադիր կոմիտէի նոր նախագահ Լեոնարդ Պետրոսեանը, Բաբուս իր ծրագիրը ներկայացրել է Մութալիբովին: Հայաստանի խորհրդարանը իր կողմից Յուլիսի 16ի յատուկ ֆուտբոլային հաւանութիւն է տուել նրանց նախագծին: Քննարկումը տեւել է երկու օր:

Լաւ կը լինէր, որ միջազգային հասարակութիւնը տեղեկա-

նար մեր որդեգրած վաւերաբերութիւն: Դրանք հաստատում են ժողովուրդների ինքնորոշման իրաւունքի անհրաժեշտութիւնը եւ բացառելով ուժով լուծելու ազգամիջեան հարցերը: Խորհրդարանը մերժեց Լեոնային Դարաբաղին վերաբերուող «Ազգային-ազատագրական պայքար» մղելու նախագիծը:

Հարց.-Ձեր հակառակորդները սկսել են ձեզ ամբաստանել, որ այժմ, երբ դուք իշխանութեան գլուխն էք, հրաժարուել էք մի դատից, որի համար պայքարել էք երեք տարի, այժմ, երբ շարունակում է Լեոնային Դարաբաղի բնակչութեան տեղահանութիւնը, խորհրդային բանակի օժանդակութեամբ:

Պատ.-Այո՛, սակայն նրանցից ոչ մէկը այլ ծրագիր չունի առաջարկելու: Երեւանի Նոփ-Օգարյովոյում յայտնեցին, որ միակ լուծումը իրագործելու համար, այսինքն՝ բանակցութիւնները, հարկ է նեցուկ կանգնել Լեոնային Դարաբաղի ներկայացուցիչներին, այդ բանակցութիւնների համար ստեղծել արդիւնաւէտ մթնոլորտ, այսինքն՝ կասեցնել «անցագրերի ստուգման գործողութիւնները»: Այն տպաւորութիւնը ունեցայ, թէ լսել են ինձ. Ադրբեջանի նախագահ Մութալիբովը չբողոքեց, իսկ պրն. Գորբաչովը գոհունակութիւն յայտնեց դրական նշաններ դրսեւորելու համար, մինչ պրն. Ելցինը խորհրդային նախագահից պահանջեց միջնորդի դեր խաղալ, որպէսզի Լեոնային Դարաբաղի հայերին ու ազերի իշխանութիւնների միջեւ իսկական ճանապարհը չփակուի: